Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՊԱՆ ՔԱՂԱՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐ ԸՆՏՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքը հայտարարում է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր ընտրելու մրցույթ՝ հետևյալ թափուր ավտոբուսային (միկրոավտոբուսային) երթուղիների համար.

NN ը/կ	ԵՐԹՈՒՂՈՒ				
	անվանումը և համարը	սկզբնակետը (ավտոկայան, ավտոկայարան, երթակարգա-վարական կետ)	վերջնակետը (ավտոկայան, ավտոկայարան, երթակարգա-վարական կետ)	տեսակը (ավտոբուսային/ միկրոավ-տոբուսային)	սպասարկման համար պահանջվող ավտոբուսների թիվը (ներառյալ պահուստային ավտոբուսների թիվը)
1.	Թիվ 6	Շահումյան հրապարակ	Բաղաբերդ թաղամասի վերջնամաս	ավտոբուսային	7
2.	Թիվ 9	Բաղաբերդ թաղ. թիվ 2 ՆՈՒՀ-ի հարակից տարածք	Կապանի ԼՀԿ-ի վարչական շենք՝ Գործարանային 4	միկրոավտոբուսային	2
3.	Թիվ 10	Շինարարների թաղ. թիվ 2 շենքի հարակից տարածք	Սյունիք բնակավայրի կենտրոնական կանգառ	միկրոավտոբուսային	2

ՑԱՆԿ
ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

1. Հայտ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1994-Ա որոշման N2 ձևի:

2.* Ավտոբուսների գրանցման վկայագրեր (ժամանակավոր կտրոն):

3.*Ավտոբուսի նկատմամբ սեփականության կամ օգտագործման իրավունքի առկայությունը հավաստող փաստաթուղթ:

4.* Ավտոբուսն այլ տեսակի վառելիքով շահագործելու համար վերասարքավորելու (կահավորելու) դեպքում՝ շահագործման և վերասարքավորման օրինականությունը հաստատող փաստաթուղթ:

5. Հավաքակայանի սեփականության կամ օգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթեր,գիշերակացով երթուղիների դեպքում վերջնակետում ավտոբուսների կայանումը, պահպանումը, նախաուղերթային տեխնիկական զննումը և վարորդների բուժզննումն ապահովելու նպատակով կնքված պայմանագրեր:

6. Ավտոկայարանային ծառայություն մատուցող կազմակերպության հետ կնքված սպասարկման նախնական, իսկ ներհամայնքային փոխադրումների դեպքում երթակարգավարական ծառայություններ մատուցող կազմակերպության հետ կնքված

ծառայություններ մատուցելու նախնական պայմանագիր (գործող պայմանագրի առկայության դեպքում նախնական պայմանագիր չի պահանջվում):

7. Փակ ծրարով ներկայացնում է երթուղու սպասարկման համար առաջարկվող մեկ ուղևոր և ուղեբեռ (եթե սահմանված է) փոխադրավարձը:

Նշված փաստաթղթերի պատճենները ներկայացվում են մեկ օրինակից, կազմակերպության կողմից սոսնձված և ստորագրված փաթեթով:

Չի ներկայացվում հայտ-պարտավորագիր ներկայացնելու դեպքում:

Մրցույթի անցկացման օրը՝ 2024 թվականի ապրիլի 22-ին ժամը՝ 11:00-ին, ՀՀ Սյունիքի մարզ ք. Կապան, Չարենցի 1, Մշակույթի կենտրոն, 2-րդ հարկ, 2/2 սենյակ:

Փաթեթների բացման օրը՝ 2024 թվականի ապրիլի 15-ին, ժամը 11:00-ին՝ ՀՀ Սյունիքի մարզ ք. Կապան, Չարենցի 1, Մշակույթի կենտրոն, 2-րդ հարկ, 2/2 սենյակ:

Հայտերն ընդունվում են ՀՀ Սյունիքի մարզ ք. Կապան, Չարենցի 1, Մշակույթի կենտրոն, 2-րդ հարկ, 5/17 սենյակում, ամեն օր՝ ժամը 9 :00 – 18:00, բացի շաբաթ և կիրակի օրերից: Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետն է՝ 2024 թվականի ապրիլի 12-ը ժամը 18:00-ն:

Շվացուցակներին ծանոթանալու համար անցնել հետևյալ հղումներով՝

https://kapan.am/Pages/Misc/Announces/view.aspx?recID=940

https://kapan.am/Pages/Misc/Announces/view.aspx?recID=939

https://kapan.am/Pages/Misc/Announces/view.aspx?recID=938

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել՝ +374 060 720072 և 060 720074 հեռախոսահամարներով:

Մրցույթն անցկացվում է ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1994-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջների համաձայն:

Մրցութային հանձնաժողովի նախագահ ***Գոռ Թադևոսյան***